Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-1348[2]-24.02.2012-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-286-Ն օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «բանալի» բառը փոխարինել «բանալիներ» բառով, «համար հավաստագիր» բառերը՝ «և նույնականացման համար հավաստագրեր» բառերով, իսկ 3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Քաղաքացին նույնականացման քարտ ստանում է կամավոր՝ 16 տարին լրանալու օրվանից՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիրը ստանալուց հետո:»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո քաղաքացիներն իրավունք ունեն ստանալու կամ փոխանակելու Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրերը»:

2) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

3) 5-րդ մասում «քարտի օգտագործումը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված՝ որպես ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունիսի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության կառավարություն	1. «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ նախագծի 1-ին հոդվածում «/այսուհետ՝ Օրենք/» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «բանալի» բառը փոխարինել «բանալիներ» բառով, «համար հավաստագիր» բառերը՝ «և նույնականացման համար հավաստագրեր» բառերով, իսկ» բառերը: 2. «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ նախագծի 1-ին հոդվածում «/այսուհետ՝ Օրենք/» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «5-րդ հոդվածի 4-րդ մասում «նախատեսված» բառից հետո լրացնել «պարտադիր» բառը, իսկ» բառերը:	Ընդունվել է Ընդունվել է	Նախագծում կատարվել են տեխնիկական փոփոխություններ: Նախագծում կատարվել են տեխնիկական փոփոխություններ: